

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԲԳԱԿՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ԵՐԵՎԱՆ 2012

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 16-ի N299Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2011 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2012 թվականի մայիսի 14-ի N°04-ԵԲ.05/2040 գրությամբ ներկայացված հաշվետվությունը (հաշվի են առնվել նաև ընկերության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N°04-ԵԲ-05/9702 գրությամբ 2011 թվականի ներդրումների ծավալում առաջարկվող փոփոխությունները):

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2011 թվականի ներդրումային ծրագիրը


«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2011 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված էր ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, արտադրական և տնտեսական գործիքների ձեռքբերման ուղղություններով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2011 ներդրումային ծրագրով նախատեսվում էր իրականացնել 18 198,3¹ մլն դրամի ներդրումներ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2011 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

¹ Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 45,4 %-ը, նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանը, վերազինմանն ու նորերի կառուցմանը:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը՝ շուրջ 39,5%-ը նախատեսված էր ուղղել նոր սպառողների միացման և հատուկ ծրագրերի իրականացման նպատակով, որով շուրջ 3 800,0 մլն դրամ նախատեսվում էր ներդնել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու ուղղությամբ, իսկ 3 380,3 մլն դրամ՝ հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ, որով պետք է վերակառուցվեր, վերականգնվեր 6(10) կՎ և 110 կՎ ենթակայանների ռելեական պաշտպանությունը և Սևանա լճի տարածքից տեղափոխվեին 35 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանները, ինչպես նաև պետք է վերակառուցվեին 6(10) կՎ և 35 կՎ օդային գծերը:

Առևտրային հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումները իրենց տեսակարար կշռով երրորդն են՝ ընդհանուրի 6,9%-ը: Այդ

նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էին նաև 0,4-110 կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

Անվտանգության ապահովման և մաշված սարքավորումների փոխարինմանն ուղղված ներդրումներով, որոնք կազմում են ընդհանուր ներդրումների 4,1%-ը, նախատեսվում էր իրականացնել 6(10), 35 և 110 կՎ բաշխիչ ցանցերի վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ:

Ներդրումային ծրագրի բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 4,3%-ը, պետք է իրականացվեին գրասենյակային գույքի ձեռքբերման համար՝ 0,3%, համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերման համար՝ 2,5%, չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման համար՝ 0,3%, ինչպես նաև վարչական շենքերի և շինությունների վերակառուցման ուղղությամբ՝ 1,2%: Այս ուղղություններով 2011 թվականի ընթացքում նախատեսվում էր իրականացնել 765,0 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2011 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2011 թվականի ընթացքում կատարել է 17 692,1 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 17 211,0 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 481,1 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ 2011 թվականին համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2011 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	8 258,6	45,4%	7 788,5	45,3%	94,3%
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	7 180,2	39,5%	6 536,1	38,0%	91,0%
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	1 251,5	6,9%	1 537,9	8,9%	122,9%
4	Անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում	743,0	4,1%	700,8	4,1%	94,3%
5	Գրասենյակային գույքի ձեռքբերում	50,0	0,3%	45,4	0,3%	90,8%
6	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	450,0	2,5%	303,3	1,8%	67,4%
7	Վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	215,0	1,2%	287,5	1,7%	133,7%
8	Չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերում	50,0	0,3%	11,5	0,1%	23,0%
9	Ընդամենը	18 198,3	100%	17 211,0	100%	95%

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված է նաև իրականացված ներդրումների (ներառյալ անավարտ աշխատանքները) ձևավորման աղբյուրները.

Աղյուսակ 2
(մլն դրամ)

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված ներդրումների ծավալը
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	2 785,58
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	4 773,84
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	134,41
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում	9 998,30
4.1	<i>աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր</i>	<i>328,96</i>
4.2	<i>հումք և նյութեր</i>	<i>2 022,94</i>
4.3	<i>տեղակայման ենթակա սարքավորումներ</i>	<i>7 484,12</i>
4.4	<i>այլ</i>	<i>162,27</i>
5	ԸՆԴԱՄԵՆԸ	17 692,12

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ներդրումների 15,7%-ը կազմում են նախորդ ժամանակաշրջանի անավարտ այն աշխատանքները, որոնք ավարտվել են 2011 թվականին: Ներդրումների 27%-ը իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով, իսկ 0,8%-ը բաժին է ընկել տեղակայում չպահանջող հիմնական միջոցներին: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 56,5%-ը:

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2011 թվականին իրականացված ներդրումների ծավալները՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

2.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավմանն նպատակով ընկերության 2011 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 8 258,6 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման, վերակառուցման և նորերի կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել է 7 900,6 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 7 788,5 մլն դրամի հիմնական միջոցներ (հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ուղղությամբ՝ 7 336,4 մլն դրամ, լարման շեղումների միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ՝ 452,1 մլն դրամ):

Առաջին հերթին դիտարկվել է սպասարկման որակի ցուցանիշների փոփոխությունը 2011 թվականի ընթացքում: Ստորև ներկայացվում է 2011 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2010 թվականի փաստացի և 2011 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 3 (ա)

Հոսանքազրկումների միջին հաճախություն (հոսանքազրկում/սպառող)					
Մարզ, Համայնք	2010թ. փաստացի	2011թ. ծրագրային	2011թ. փաստացի	(4)-ը (2)-ի նկատմամբ	(4)-ը (3)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6
Երևան	5,74	5,67	4,73	18%	17%
Արարատ	7,37	7,15	5,78	22%	19%
Վայոց Ձոր	9,91	9,80	6,75	32%	31%
Արագածոտն	5,64	5,59	4,14	27%	26%
Արմավիր	10,33	9,46	7,51	27%	21%
Կոտայք	6,53	6,48	6,47	1%	0%
Գեղարքունիք	7,60	7,55	6,12	19%	19%

Տավուշ	7,55	7,49	6,39	15%	15%
Շիրակ	5,03	4,98	4,03	20%	19%
Սյունիք	3,04	3,01	0,93	69%	69%
Լոռի	5,43	5,25	5,46	-1%	-4%

Աղյուսակ 3 (բ)

Հոսանքազրկումների միջին տևողություն (րոպե/սպառող)					
Մարզ, Համայնք	2010թ. փաստացի	2011թ. ծրագրային	2011թ. փաստացի	(4)-ը (2)-ի նկատմամբ	(4)-ը (3)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6
Երևան	588,38	582,51	324,95	45%	44%
Արարատ	1275,81	1230,00	1251,42	2%	-2%
Վայոց Ձոր	1880,75	1730,00	1419,96	25%	18%
Արագածոտն	980,85	960,00	626,01	36%	35%
Արմավիր	1523,95	1508,71	893,48	41%	41%
Կոտայք	1088,37	1040,00	831,69	24%	20%
Գեղարքունիք	1535,79	1450,00	1101,97	28%	24%
Տավուշ	1145,76	1080,00	847,61	26%	22%
Շիրակ	727,93	707,97	460,00	37%	35%
Սյունիք	1178,48	930,00	290,53	75%	69%
Լոռի	947,93	877,93	625,97	34%	29%

Ինչպես երևում է աղյուսակ 3 (ա) և 3 (բ)-ից, հանրապետության գրեթե բոլոր մարզերում հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել են, իսկ 9 մարզերում գերազանցել են նաև ծրագրային ցուցանիշները: Ուստի, կարելի է

արձանագրել, որ այս ուղղություններով իրականացված 7336,4 մլն դրամի ներդրումները ունեցել են իրենց դրական արդյունքը:

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ մեր կարծիքով, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների ոչ բոլոր դեպքերն են գրանցվում, ինչի մասին է վկայում Աղյուսակ 4-ում ներկայացված՝ 2011 թվականի ընթացքում ՀՀ մարզերի այն բնակավայրերի քանակը, որտեղ էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել:

Աղյուսակ 4

Մարզ, Համայնք	Բնակավայրերի քանակը	Բնակավայրերի քանակը, որտեղ ընդհատումներ չեն գրանցվել	%
Արագածոտն	119	53	45%
Արարատ	98	2	2%
Արմավիր	98	27	28%
Գեղարքունիք	97	11	11%
Լոռի	124	14	11%
Կոտայք	69	5	7%
Շիրակ	130	9	7%
Սյունիք	134	48	36%
Վայոց ձոր	54	6	11%
Տավուշ	65	5	8%
Ընդամենը	988	180	18%

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից, ՀՀ մարզերի 988 բնակավայրերից 180-ում 2011 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել: Ուստի պետք է փաստել նաև, որ ընկերության կողմից ներկայացվող

տեղեկատվությունը թերի է, և վերջինս պետք է շարունակի ջանքեր գործադրել էլեկտրամատակարարման ընդհատումների գրանցումների մակարդակը բարելավելու ուղղությամբ:

Ստորև ներկայացվում է նաև 2011 թվականի ընթացքում սպառողների լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2010 թվականի փաստացի և 2011 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 5 (ա)

Լարման շեղման դեպքերի միջին հաճախությունը (լարման շեղում/սպառող)					
Մարզ, Համայնք	2010թ. փաստացի	2011թ. ծրագրային	2011թ. փաստացի	(4)-ը (2)-ի նկատմամբ	(4)-ը (3)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6
Երևան	10,88	10,70	18,18	-67%	-70%
Արարատ	21,37	20,35	15,64	27%	23%
Վայոց Ձոր	4,99	4,30	9,18	-84%	-113%
Արագածոտն	16,01	15,60	16,85	-5%	-8%
Արմավիր	17,55	16,80	14,70	16%	12%
Կոտայք	9,97	9,80	16,97	-70%	-73%
Գեղարքունիք	19,41	18,80	21,14	-9%	-12%
Տավուշ	8,85	8,30	20,46	-131%	-146%
Շիրակ	7,34	7,21	16,53	-125%	-129%
Սյունիք	3,04	3,01	0,93	69%	69%
Լոռի	5,43	5,25	5,46	-1%	-4%

Աղյուսակ 5 (բ)

Լարման շեղման դեպքերի միջին տևողությունը (ժամ/սպառող)					
Մարզ, Համայնք	2010թ. փաստացի	2011թ. ծրագրային	2011թ. փաստացի	(4)-ը (2)-ի նկատմամբ	(4)-ը (3)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6
Երևան	1957,71	1650,00	3188,28	-63%	-93%
Արարատ	3924,46	3700,00	2777,04	29%	25%
Վայոց Ձոր	896,76	775,00	1637,86	-83%	-111%
Արագածոտն	2893,22	2800,00	3023,66	-5%	-8%
Արմավիր	3236,00	3100,00	2608,62	19%	16%
Կոտայք	1773,93	1740,00	3021,41	-70%	-74%
Գեղարքունիք	3524,86	3400,00	3813,11	-8%	-12%
Տավուշ	1552,48	1450,00	3597,05	-132%	-148%
Շիրակ	1325,04	1300,00	2921,20	-120%	-125%
Սյունիք	3039,21	2925,00	2117,20	30%	28%
Լոռի	2356,53	2280,00	4312,00	-83%	-89%

Ինչպես երևում է աղյուսակ 5 (ա) և 5 (բ)-ից, հանրապետության 11 մարզերից (այդ թվում՝ Երևան քաղաքը) միայն Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերում են էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշները բարելավվել՝ նախորդ տարվա համեմատությամբ: Մնացած 8 մարզերում լարման շեղման միջին հաճախությունը և տևողությունը գրեթե կրկնակի աճել են: Նման պատկերի պատճառ կարող է հանդիսանալ ինչպես ընկերության կողմից կատարված հաշվարկների թերի լինելը, այնպես էլ իրականացված ներդրումների անարդյունավետ լինելը:

Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ 2011 թվականին իրականացված 452,1 մլն դրամի ներդրումների ուսումնասիրության արդյունքում

պարզվել է, որ 159,9 մլն դրամի աշխատանքները որևէ էական ազդեցություն չեն ունեցել մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների բարելավման վրա:

2.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

2.2.1 Նոր սպառողների միացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2011 թվականին նախատեսվում էր ներդնել 3 800,0 մլն դրամ: Փաստացի շահագործման են հանձնվել 3 724,8 մլն դրամի հիմնական միջոցներ: Հարկ է նշել, որ նոր բաժանորդների միացման նպատակով զանձվել են 754,0 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

2.2.2 Հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2011 թվականին նախատեսվում էր ներդնել 3 380,2 մլն դրամ, որից 2 787,4 մլն դրամը՝ 6(10), 35 և 110 կՎ ենթակայանների վերակառուցման և ռելեական պաշտպանության վերականգնման ուղղությամբ, իսկ 592,9 մլն դրամը՝ Սևանա լճի տարածքից 35 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների տեղափոխման և 6(10), 35 կՎ լարման օդային գծերի վերակառուցման ուղղությամբ: Նշված ուղղություններով համապատասխանաբար փաստացի ներդրվել է 2 492,3 և 529,0 մլն դրամ, որոնցից 2011 թվականին ավարտվել են 2 811,4 մլն դրամի աշխատանքները:

2.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 1 251,5 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի

մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը, դրանց շահագործման և պահպանման անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 1 537,9 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 1 136,7 մլն դրամ, որից 1 029,0 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման նպատակով,
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 356,4 մլն դրամ,
- 110-0,4 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 51,7 մլն դրամ, որից ավարտվել են 44,8 մլն դրամի աշխատանքները:

Այս ուղղությամբ էլեկտրաէներգիայի հաշվիչների փոխարինման և հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 281,3 մլն դրամով:

2.4 Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի մյուս ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 743,0 մլն դրամ: Փաստացի 700,8 մլն դրամի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման: Արդյունքում լարման տարբեր մակարդակներում փոխարինվել են ուժային տրանսֆորմատորներ և շահագործման համար ոչ պիտանի այլ սարքավորումներ, վերակառուցվել են օդային և մալուխային գծեր, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում կատարվել են էլեկտրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ: Այս բաժնում 35-110 կՎ օդային գծերի վերակառուցման և ԼՏԵ-ի փոխարինման

ուղղություններով հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցվել է 17,5 մլն դրամով:

2.5 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերում՝ 50,0 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի իրականացված ներդրումները կազմում են 45,4 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի, արքեսուարների, լիցենզիաների և ծրագրային փաթեթների ձեռքբերում՝ 450,0 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 303,3 մլն դրամի համակարգչային տեխնիկա և արքեսուարներ,
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 215,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2011 թվականի ընթացքում ներդրվել է 287,8 մլն դրամ արժեքով: Արդյունքում՝ հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 72,5 մլն դրամով,
- չափիչ սարքերի և գործիքների ձեռք բերում՝ 50,0 մլն դրամ արժեքով: Ներդրումների փաստացի ծավալը կազմել է 11,5 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 3.

Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

2011 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի իրականացված 17 692,1 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա չեն փոխհատուցման ընկերության սակագնային մարժայով, քանի որ.

1. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ԿՍՕ, ԿՌՌԻ, ՅԱՌՎ, ՎՌՌԻ, ՇՌՍ, ՇՉՕ, էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներ և հաշվիչների արկղեր) արժեքները գերազանցում են դրանց շուկայական գները: Այդ սարքավորումների շուկայական գների

գնահատման և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել է 2 157,6 մլն դրամ,

2. կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանց գները գերազանցում են շուկայականը: Համադրության արդյունքում ստացվել է, որ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ծավալում շուկայականից բարձր գներով ձեռք բերված նյութերի, սարքավորումների և շինմոնտաժային աշխատանքների արժեքները կազմում են դրանց շուրջ 12,7%-ը, ինչը համարժեք է 586,4 մլն դրամի: Այս ներդրումները ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
3. էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ իրականացված ներդրումներից 159,9 մլն դրամի աշխատանքները որևէ էական ազդեցություն չեն ունեցել մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների բարելավման վրա: Ուստի այդ ներդրումները նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,
4. առկա են 109,7 մլն դրամի նախագծման նպատակով իրականացված ծախսեր, որոնց արդյունքում կամ աշխատանքներ չեն իրականացվել կամ այդ աշխատանքների արժեքները անհամեմատ փոքր են նախագծով նախատեսվածից (օրինակ՝ 005714297 գույքահամարի հիմնական միջոցի վրա կատարվել են 5,2 մլն դրամի աշխատանքներ, սակայն դրանց նախագծման ծախսերը կազմել են 7 մլն դրամ): Նախագծման այդպիսի ծախսերը դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, ուստի ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,

Բացի վերը նշվածը, իրականացվել է հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալի գերազանցումը կազմել է շուրջ 291 մլն դրամ, հետևյալ ենթաուղղություններով.

- արտադրական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 2,77 մլն դրամ,
- եռաֆազ բազմասակազնային էլեկտրոնային հաշվիչների տեղադրում՝ 48,41 մլն դրամ
- հաշվիչների արկղերի տեղադրում՝ 163,84 մլն դրամ,
- 6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերում լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանների տեղադրում՝ 11,97 մլն դրամ,
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 63,96 մլն դրամ:

Հարկ է նկատի ունենալ, որ ընկերությունն ազատ էր 2011 թվականի ընթացքում դիմելու հանձնաժողով՝ ներդրումային ծրագրում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, այդ թվում ներկայացնելու այդպիսի փոփոխությունների իրականացման անհրաժեշտության հիմնավորումները, սակայն նման առաջարկությամբ հանձնաժողով չի դիմել: Ուստի, վերը նշված ներդրումների ծավալը ևս նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշված վերլուծության արդյունքները, ստորև ամփոփված է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2011 թվականի ընթացքում փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը:

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից
2011 թվականին իրականացված ներդրումների ծավալից
հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**

Աղյուսակ 6
(մլն դրամ)

1	2011 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը	17 692,125
2	2011 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը	17 211,008
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում	4 058,577
3.1	Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	3 304,558
3.1.1	Սարքավորումների արժեքից նվազեցումներ (շուկայական գները գերազանցելու պատճառով)	2 157,549
ա.	ԿՍՕ, ԿՌՈԻ, ՅԱՌՎ, ՎՌՈԻ, ՇՌՍ, ՇՉՕ, հաշվիչի արկղ	1 829,963
բ.	Էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներ	327,586
3.1.2	Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից նվազեցումներ (շուկայական գները գերազանցելու պատճառով)	586,385
3.1.3	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ (չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը)	109,691
3.1.4	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	290.963
ա.	արտադրական շենքերի և շինությունների վերակառուցում	2,767
բ.	եռաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներ	48,414
գ.	հաշվիչների արկղեր	163,843

դ.	6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերում լրակազմ տրանսֆորմատորային ենթակայաններ	11,974
ե.	վարչական շենքերի և շինություններ	63,965
3.1.5	Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին տարեկան հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ իրականացված անարդյունավետ ներդրումներ	159,970
3.2	Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ	754,019
4	2011 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը	13 152,431